ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 01/24

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳՈՎ ԳՈՐԾՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳՐԻ ԵՎ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՆԻՍՏԻ

ք. Բյուրեղավան 05 մարտի 2024թ.

2024 թվականի փետրվարի 16-ից մինչև մարտի 04-ը ներառյալ Բյուրեղավանի համայնքապետարանը կազմակերպել էր Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի 2023 թվականի բյուջեի կատարման և 2023 թվականի տարեկան աշխատանքային պլանի իրականացման վերաբերյալ տարեկան հաշվետվությունների վերաբերյալ հանրային քննարկումներ:

Հանրային քննարկումների մասին հրավերը հրապարակվել էր Բյուրեղավանի համայնքապետարանի պաշտոնական էլեկտրոնային կայքում՝ (տես՝ https://byureghavan-kotayk.am/Pages/DocFlow/Default.aspx?a=v&g=b9dfe0a3-3099-4c53-ab4e-c34d5ce96a3b հղումով), ֆեյսբուքյան էջում, ինչպես նաև փակցվել էր Բյուրեղավանի համայնքապետարանում, ՀՈԱԿ-ներում, Նուռնուս և Ջրաբեր բնակավայրերում առկա ցուցատախտակներին:

Օրակարգում՝

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու՝

1. «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի 2023 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին»,
2. «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի 2023 թվականի տարեկան աշխատանքային պլանի իրականացման վերաբերյալ տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին»

որոշումների նախագծերի վերաբերյալ հանրային քննարկումներ:

Փետրվարի 16-ից մինչև մարտի 04-ը ներառյալ էլեկտրոնային եղանակով կայացած քննարկումների ընթացքում ներկայացված նախագծերի վերաբերյալ շահագրգիռ անձանց կողմից էլեկտորնային կայքում առաջարկություններ և կարծիքներ չեղան:

Որոշեցին՝

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի 2023 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին»,
2. «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի 2023 թվականի տարեկան աշխատանքային պլանի իրականացման վերաբերյալ տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին»

որոշումների նախագծերին հավանություն տալ և գնահատել դրական:

Քննարկումների պատասխանատու և վարող՝
Բյուրեղավան համայնքի ղեկավար՝ Հ. Բալասյան

Նուռնուս բնակավայրի վարչական ղեկավար՝ Ա. Հարությունյան

Ջրաբեր բնակավայրի վարչական ղեկավար՝ Բ. Դավթյան

Արձանագրող՝ Բյուրեղավանի համայնքապետարանի
աշխատակազմի քարտուղար՝ Լ. Ավուշյան